1991 թ. ադրբեջանական հատուկ ջոկատայինները խորհրդային բանակի հետ «Օղակ գործողության» շրջանակներում էթնիկ զտումներ են իրականացրել տարածաշրջանի հայերի նկատմամբ, ինչը նպաստել է հակամարտության սրմանը: Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանը և Ադրբեջանն իրենց անկախ հռչակեցին, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղը: Այնուհետև Ադրբեջանը վերացրեց տարածաշրջանի ինքնավար կարգավիճակը և բացահայտորեն դիմեց ռազմական ուժի: ԼՂԻՄ-ի մայրաքաղաքը պաշարվել էր, և այնտեղ գտնվող 70000 խաղաղ բնակիչներ ենթարկվում էին մշտական հրետակոծությունների, այդ թվում՝ հրթիռային հրետանու, զրկված էին ջրից, էլեկտրականությունից, սննդից և վառելիքից:¹⁰ 1992 թ. հայկական կողմին հաջողվեց ճեղքել պաշարումը և Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի մեծ մասը նորից վերահսկողության տակ վերցնել: Ներքաղաքական անկայունության պայմաններում զորքերին հաջողվել է գրավել

3 Նույնը, 105:

4 Պետիցիա (լատ.՝ petitio), գրավոր ձևով պետական իշխանության կամ տեղական կառավարման մարմիններին ուղղված անհատական կամ կոլեկտիվ խնդրանք [ծնթ. թարգմ.]:

5 De Waal, Black Garden, 17:

6 Նույնը, 35:

7 European Parliament, Resolution on the Situation in Soviet Armenia (1988):

8 Parks (1988):

9 Human Rights Watch (1991), 7:

10 Human Rights Watch/Helsinki (1993), Vol. 5, 11:

նաև նախկին ինքնավար մարզից դուրս գտնվող ռազմավարական կարևոր նշանակետեր: Հարյուրհազարավոր ադրբեջանցի խաղաղ բնակիչներ մարտական գործողությունների պատճառով դիմեցին փախուստի կամ էլ հետագայում արտաքսվեցին: Պատերազմի ժամանակ տեղի ունեցան խաղաղ բնակչության ջարդեր, օրինակ՝ հայերինը Մարաղայում¹¹ և ադրբեջանցիներինը Խոջալուում:¹²

Մարտերն ավարտվել են 1994 թ. զինադադարով, որը ստեղծել է առաջնագծում մարտական գործողությունները:¹³ Լեռնային Ղարաբաղի մեծ մասը և հարակից յոթ ադրբեջանական շրջանները մնացին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վերահսկողության տակ: Հաջորդ տասնամյակների ընթացքում կրկնվող ռազմական բախումներ եղան, մինչև 2020 թ. Ադրբեջանը սկսեց նոր պատերազմ,¹⁴ որը հանգեցրեց հազարավոր զոհերի: Այս գործողությունների արդյունքում Ադրբեջանին հաջողվեց գրավել նախկին ԼՂՀ-ի մեծ մասը, այդ թվում Հադրութի և Շուշիի շրջանները: Ըստ զինադադարի¹⁵ նոր համաձայնագրի նախկին Ինքնավար Մարզին հարակից շրջանների վերահսկողությունը հանձնվել է Ադրբեջանին, իսկ հայաբնակ մնացած տարածքի անվտանգությունը մնացել է ռուս խաղաղապահների վերահսկողության տակ: Այնուամենայնիվ, զինադադարի ռեժիմը անընդհատ խախտվում է հիմնականում Ադրբեջանի կողմից:¹⁶

3. Ինքնորոշման իրավունքի իրավական աղբյուրները

Ազգերի ինքնորոշման իրավունքի մասին նշված է ՄԱԿ-ի կանոնադրության 1-ին հոդվածի 2-րդ կետում: Այսպիսով՝ ՄԱԿ-ի նպատակն է «զարգացնել ազգերի բարեկամական հարաբերություններ՝ հիմնված ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքով և այլ համապատասխան միջոցներ ձեռնարկել հանուն համընդհանուր խաղաղության ամրապնդման»: Սկզբունքն իր առաջին կոնկրետ ձևակերպումը ստացել է 1960 թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1514 «Գաղութատիրական երկրներին և ժողովուրդներին անկախություն շնորհելու» բանաձևում, ուր միաձայն հաստատվեց, որ բոլոր ժողովուրդները ինքնորոշման իրավունք ունեն: Այստեղ արդեն հասկանալի է դառնում, որ ազգերի ինքնորոշման իրավունքի գաղափարն առաջացել է ապագաղութացման համատեքստում: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 1970 թ. մշակել է ժողովուրդների

11 Human Rights Watch/Helsinki (1992), 29:

12 Նույնը, 19:

13 UN Peacemaker, Bishkek Protocol (1994):

14 OC Media, «Ալիևը խոստովանել է, որ Ադրբեջանը սկսել է Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմը» (2022):

15 2020 թ. նոյեմբերի 10-ի զինադադարի համաձայնագրի տեքստը հասանելի է <http://en.kremlin.ru/events/president/news/64384> կայքում (հարցվել է 30.11.2023):

16 Fults/Stronski (2022):

ինքնորոշման իրավունքի մինչ օրս ամենամաքողջական ձևակերպումը: Ըստ ՄԱԿ-ի կանոնադրության պետությունների միջև բարեկամական հարաբերությունների և համագործակցության վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրում (Friendly Relations Declaration) Գլխավոր ասամբլեան նշում է.

«Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ ամրագրված ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի համաձայն՝ բոլոր ժողովուրդներն իրավունք ունեն ազատ և առանց արտաքին միջամտության որոշել իրենց քաղաքական կարգավիճակը, ձևավորել իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը և յուրաքանչյուր պետությունն պարտավոր է կատարել իր կողմից ստանձնած պարտավորությունները»:

Այս իրավունքի բովանդակությունը ներկայացված է հետևյալ կերպ.

«Ինքնիշխան և անկախ պետության ստեղծումը, ինքնական ինտեգրումը անկախ պետության կամ մի անկախ պետության հետ ազատ միավորումը, ժողովրդի կողմից ազատորեն որոշված մեկ այլ անկախ կարգավիճակի ընդունումը հնարավորություններ է ստեղծում ինքնորոշման իրավունքի իրականացման համար»:¹⁷

Հետևաբար, ազգերի ինքնորոշման իրավունքը միջազգային իրավունքի բաղկացուցիչ մասն է: Սակայն խիստ վիճելի են նրա գոյությունից բխող իրավական հետևանքները:

4. Համարվում են արդյոք Լեռնային Ղարաբաղի հայերը ժողովուրդ՝ ելնելով ազգերի ինքնորոշման իրավունքից

Նախքան ինքնորոշման իրավունքի համատեքստում հնարավոր անջատման (սեցեսիայի) իրավունքից բխող իրավական լարվածությանը անցնելը, պետք է դիտարկել Լեռնային Ղարաբաղում հայերի ինքնորոշման իրավունքի տեսանկյունից ժողովուրդ հանդիսանալու հանգամանքը:

Միջազգային իրավունքում «ժողովուրդ» եզրույթն գործածվում է տարբեր ձևերով: Էական տարբերությունն այն է արդյոք ձևավորված պետության ժողովուրդ (պետական տարածքում ապրող անձանց ամբողջություն) տերմինաբանությունն ազգ իմաստով սահմանափակվում է, կամ թե էթնիկ համայնքներով՝ իրարից տարբերվող կամ սահմանազատվող որոշակի ընդհանուր հատկանիշներով լեզու,

17 UN General Assembly (1970):

մշակույթ, կրոն, մտածելակերպ, պատմական փորձ, ճակատագիր, նույնպես կարող են որակվել որպես ինքնորոշման իրավունքի կրողներ:¹⁸

Քանի որ ինքնիշխան, անկախ պետության ստեղծման համար Բարեկամական հարաբերությունների հռչակագիրը (Friendly-Relations-Declaration) ենթադրում է ժողովրդական համայնքի առկայություն, որն այս փուլում դեռ չի կարող լինել պետական ժողովուրդ, ինքնորոշման իրավունքը տրամաբանորեն չի կարող սահմանափակվել միայն ձևավորված պետական ժողովրդով: Ուստի «ժողովուրդը», որպես ինքնորոշման իրավունքի կրող, պետք է լայնորեն ընկալվի և կարող է հավասարապես վերաբերել վերը նշված հատկանիշներով «Պետական ժողովուրդ»-ից տարբերվող էթնիկ խմբերին:¹⁹

Արդյոք նման էթնիկ խումբը ինքնորոշման իրավունքի կրող կարող է դառնալ կախված է ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ չափանիշներից: Լեոնային Ղարաբաղում հայերի պատմական ներկայությունը վկայում են լավ փաստագրված բազմաթիվ պահպանված, մասամբ միջնադարյան ճարտարապետական հուշարձանները: Լեոնային Ղարաբաղում հայերի բնակչության թվի որոշ տատանումներ են եղել պայմանավորված տարածաշրջանում ժամանակավոր մահմեդական տիրապետությամբ: Այդ ամենով հանդերձ Լեոնային Ղարաբաղում հայերը միշտ կազմել են շրջանի բնակչության մեծամասնությունը:²⁰ Չնայած այն հանգամանքին, որ խորհրդային տարիներին հայերի տեսակարար կշիռը 1921 թ. 95%-ից²¹ նվազել է, 1989 թ. հասնելով 77%-ի,²² այնուամենայնիվ նրանք մեծամասնություն են մնացել, մինչդեռ ադրբեջանցիները միայն փոքրամասնություն են կազմել: Այս երկու ազգաբնակչությունները տարբերվում էին իրարից լեզվով և կրոնական պատկանելությամբ: Խորհրդային Միության կողմից Լեոնային Ղարաբաղի ինքնավար մարզի կարգավիճակը տրվել էր հիմնվելով տարածաշրջանում հայերի մեծամասնության փաստի վրա: Այդ ամենը օբյեկտիվ սահմանազատելիության ցուցանիշ էր:

Սուբյեկտիվ տեսանկյունից կարևորն այն է՝ արդյոք էթնիկ խումբը ճանաչում է իր ինքնավարությունը և արտահայտում է ինքնորոշման կամք՝ ուղղված ժողովրդի, որպես էթնիկ խմբի գոյության և ինքնության պահպանմանը:²³ Լեոնային Ղարաբաղի հայերը միշտ, երբ Խորհրդային Միության ներքաղաքական իրավիճակը դա թույլ է տվել, նամակներ ու պետիցիաներ էին ուղարկում Մոսկվա՝ խնդրելով վերանայել տարածաշրջանի ինքնավար կարգավիճակը (ինչպես օր.՝ 1945, 1965 և 1977 թթ.):²⁴

18 Luchterhandt, Das Recht Berg-Karabachs auf staatliche Unabhängigkeit, 30; 34:

19 Այս մասին լրացուցիչ մանրամասների համար տես նույնը, 34:

20 Shnirelman, The Value of the Past, 153:

21 Karapetian, The Ethnic Structure of the Population of Mountainous Karabagh in 1921, 74:

22 Խորհրդային Միության մասշտաբով 1989 թ. մարդահամարը հասանելի է Լայբնիցի սոցիալական գիտությունների ինստիտուտից, տես՝ <https://doi.org/10.4232/1.10311>:

23 Babaian, Das völkerrechtliche Selbstbestimmungsrecht Berg-Karabachs, 91; 106:

24 De Waal, Black Garden, 17:

1991 թ. անցկացված հանրաքվեին մասնակցած 98%-ը կողմ է քվեարկել Լեռնային Ղարաբաղի անկախությանը: Դրանով մարդիկ հստակ արտահայտել են իրենց ինքնորոշման կամքը:

5. Տարածքային ամբողջականության սկզբունքը

Մինչ Լեռնային Ղարաբաղի հայերը հիմնվում էին ազգերի ինքնորոշման իրավունքի վրա, Ադրբեջանն իր հերթին վկայակոչում էր տարածքային ամբողջականության սկզբունքը: Տարածքային ամբողջականությունն ենթադրում է պետության անձեռնմխելիությունն իր ամբողջական վիճակում: Այս սկզբունքը պաշտպանում է պետության տարածքային սահմաններն ու հանդիսանում է պետական ինքնիշխանության հիմքը:²⁵ ՄԱԿ-ի կանոնադրության 2-րդ հոդվածի 4-րդ կետում ասվում է.

«Բոլոր անդամները միջազգային հարաբերություններում ձեռնպահ են ցանկացած պետության տարածքային ամբողջականության կամ քաղաքական անկախության նկատմամբ և/կամ Միավորված ազգերի նպատակներին անհարիր որևէ այլ ձևով ուժի գործադրումից կամ դրա սպառնալիքից»:

Այս սկզբունքի կարևորության մասին են վկայում նաև վերոնշյալ Բարեկամական հարաբերությունների հռչակագրի (Friendly Relations Declaration) բազմիցս կատարած նշումները: Ինքնին հասկանալի է, որ տվյալ սկզբունքն անհրաժեշտ է համընդհանուր արժեքների վրա հիմնված աշխարհակարգի համար, եթե վերջինս ձևավորվում է կայուն պետություններով, որոնք հստակ սահմանազատված տարածքներ ունեն: Այս մասին 1992 թ. համատեքստում ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը հայտարարել է.

«Եթե յուրաքանչյուր եթնիկ, կրոնական կամ լեզվական խումբ հավակներ պետականության, ապա մասնատման գործընթացն անվերջ կլինի, իսկ բոլորի համար խաղաղության, անվտանգության և բարեկեցության հասնելն՝ ավելի դժվար»:²⁶

25 Blay, Territorial Integrity and Political Independence, Abs. 1:

26 ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի զեկույց, «Խաղաղության օրակարգ», An Agenda for Peace, 17.06.1992, UN Doc. A/47/277, էջ 5:

6. Ինքնորոշման իրավունքի և տարածքային ամբողջականության սկզբունքի միջև լարվածության դաշտը

Հարցականի տակ է մնում, թե ինչպե՞ս պետք է հայերի ինքնորոշման իրավունքի և Ադրբեյջանի տարածքային ամբողջականության պահանջները համաձայնեցվեն: Ինչպես արդեն նշվել է, ազգերի ինքնորոշման իրավունքն առաջացել է ապագադուրթացման կոնտեքստում: Ուստի երբ պահանջն այդ կոնտեքստից դուրս տարածքային անջատումների մասին է, ապա իրավիճակն ավելի է բարդանում: Այս մասին օրինակ Կանադայի Գերագույն դատարանը հայտնում է.

«Միջազգային իրավունքն ակնկալում է, որ ինքնորոշման իրավունքը կիրականացվի արդեն գոյություն ունեցող ինքնիշխան պետությունների կազմում գտնվող ժողովուրդների կողմից և այդ պետությունների տարածքային ամբողջականության պահպանմանը համապատասխան», և որ միակողմանի անջատման իրավունք կարող է գործել «միայն բացառիկ դեպքերում, այն էլ՝ մանրակրկիտ հստակեցված հանգամանքներում»:²⁷

Արդյունքում ստացվում է, որ ինքնորոշման իրավունքը պետք է իրականացվի երկրի ներսում, այսինքն՝ առկա տարածքային ամբողջականության շրջանակներում: Բայց եթե կան մարդու իրավունքների ծանրագույն խախտումներ, որոնք անհնարին են դարձնում այս ինքնորոշման իրականացումը տվյալ երկրի ներսում, ապա կարող է ձևավորվել արտաքուստ ինքնորոշման տրամադրման իրավունք՝ ընդհուպ նաև անջատման ձևով:

7. Լեռնային Ղարաբաղի հայերի իրականությունը

Ինքնորոշման արտաքին իրավունքի իրացման հնարավորությունը ինքնիշխան պետությունից անջատվելու ձևով խոչընդոտ է ներպետական ինքնորոշման իրավունքի իրականացմանը՝ որպես նախապայման ունենալով մարդու իրավունքների լքջագույն խախտումները:

Լեռնային Ղարաբաղի դեպքում այն հանգամանքը, որ դա իբրև ինքնավար մարզ է ճանաչվել Ադրբեյջանական Խորհրդային Հանրապետության կազմում, սպավորություն է ստեղծվում, որ այդպիսով արդեն իսկ երաշխավորված էր ներքին ինքնորոշման խնդիրը: Իրականում ինքնավարության կարգավիճակն ի սկզբանե չի

27 *Secession of Quebec, Re, Reference to Supreme Court, File No 25506, (1998) 2 SCR 217, ILDC 184 (CA 1998), 161 DLR (4th) 385, 228 NR 203, JE 98-1716, (1998) SCJ No 61 (QL), (1998) ACS No 61, 55 CRR (2d) 1, 81 ACWS (3d) 798, (1998) CanLII 795 (SCC), (1999) 115 ILR 536, (1998) 37 ILM 1340, (20th August 1998), Canada; Supreme Court [SCC], H6:*

կիրառվել, քանի որ Ադրբեջանի կոմունիստական կուսակցությունը թույլ չի տվել հայկական կողմի որևէ ազդեցություն կազմակերպության կանոնակարգի վրա: Ընդհակառակը, Ադրբեջանի սահմանադրությունը շատ դեպքերում ինքնավար վարչակազմին գրկել է որոշումներ կայացնելու իրավունքից: Ադրբեջանի կառավարությունն իսկապես լիազորված էր ղեկավարել Լեռնային Ղարաբաղի գործադիր կոմիտեի աշխատանքը: Հավելյալ խտրականություններ տեղի էին ունենում ազգային-մշակութային ոլորտներում, ինչպես օրինակ՝ 1981-ից հայերենն այլևս չի թույլատրվում դատարաններում իբրև պաշտոնական լեզու:²⁸ Միաժամանակ Ադրբեջանն ակտիվորեն ճիգեր էր գործադրում Արցախում նվազեցնելու հայերի թիվը: Ինչպես արդեն նշվեց վերևում, խորհրդային տարիներին այդ ցուցանիշը 95%-ից իջել էր մինչև 77%, մինչդեռ Ադրբեջանի բնակչության տեսակարար կշիռը աճել էր: 2002 թ. տված հարցազրույցում ինքը՝ Հեյդար Ալիևը, հաստատեց, որ նա անձամբ ձգտել է փոխել Լեռնային Ղարաբաղի ժողովրդագրությունն՝ ի վնաս հայերի: Իսկ նրա որդին և Ադրբեջանի ներկայիս նախագահ, Իլհամ Ալիևը, 2019 թ. հպարտությամբ հայտարարեց, որ իր հորը հաջողվել է կրկնապատկել ադրբեջանական բնակչության թիվը Լեռնային Ղարաբաղում:²⁹ Մտավախությունը, որ իրադարձությունների նման զարգացումը կարող է սրվել, անհիմն չէր, քանի որ Խորհրդային Միության գոյության տարիներին Ադրբեջանին արդեն հաջողվել էր իր տիրապետության տակ գտնվող Նախիջևանի ինքնավար մարզից գրեթե ամբողջությամբ արտաքսել բնիկ հայկական փոքրամասնությանը, որը կազմում էր բնակչության մոտ 40%-ը:³⁰

Հակամարտության սկզբում խորհրդային ղեկավարությունը նույնպես գիտակցում էր ինքնավարության իրականացման հիմնական թերությունները: Այս մասին Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության (ԽՄԿԿ) Կենտրոնական Կոմիտեի ազգային հարաբերությունների ենթաբաժնի վարիչ Վ. Ա. Միխայլովը, 1988 թ. հուլիսի 27-ին լրագրողներին ասել է.

«Պետք է բացեիքաց ընդունել, որ ինքնավարության հետ կապված ազգային քաղաքականության իրականացման ընթացքի որոշակի փուլում թույլ են տրվել լուրջ սխալներ, հատկապես՝ ազգային-մշակութային բնույթի: Ինքնավարության իրավունքները սահմանափակվել են: Սխալներ կային նաև տնտեսության զարգացման մեջ [...] սխալները թույլ են տրվել Ադրբեջանի Կոմկուսի ղեկավարության և Ադրբեջանի կառավարության կողմից, մասնավորապես՝ Կոմկուսի Կենտկոմի նախկին առաջին քարտուղարներ Հ. Ա. Ալիևի և Կ. Մ. Բաղիրովի: Ինչպես իրավիճակի զարգացումից տեսնում ենք, իսկապես մեծ չափի վնաս է պատճառվել»:³¹

28 Babaian, Das völkerrechtliche Selbstbestimmungsrecht Berg-Karabachs, 97 և շար.:

29 Horizon Weekly (2019):

30 Walker, Armenia and Karabakh, 64 և շար.:

31 Luchterhandt, Das Recht Berg-Karabachs, 70:

Այդիստրականություններն այնուհետև վերաճեցին ղարաբաղյան շարժման: Հայերին ավելի շատ ինքնավարություն տրամադրելու փոխարեն՝ էլ ավելի բռնություններ էին կիրառվում: Ադրբեջանի որոշ քաղաքներում հայերի դաժան ջարդերից բացի, Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը Խորհրդային բանակի հետ համատեղ իրականացնում է վերոնշյալ «Օղակ գործողությունը», որի ընթացքում բազմաթիվ հայեր սպանվեցին, հազարավորը արտաքսվեցին, և մարդու իրավունքների կոպիտ խախտման զրհ դարձան: 1991 թ. իրադարձությունները հետաքննող մի միջազգային պատվիրակություն հաստատել է բռնի տեղահանումներ, անհիմն ձերբակալություններ և խաղաղ բնակչության նկատմամբ բռնի վերաբերումներ:³² Այդ իսկ պատճառով «Օղակ գործողությունը» 1991 թ. խիստ կերպով դատապարտվել է ԱՄՆ Կոնգրեսի կողմից:³³ «Օղակ գործողության» ընթացքում մարդու իրավունքների խախտումներին զուգահեռ, Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղը դրեց նյութատեխնիկական շրջափակման մեջ, ինչը հանգեցրեց հումանիտար ճգնաժամի:³⁴ Human Rights Watch-ը հաստատել է, որ 1991/92 թթ. ձմռանը Ադրբեջանի եռամյա տնտեսական և տրանսպորտային շրջափակման պատճառով, Լեռնային Ղարաբաղն ամբողջությամբ զրկվել էր վառելիքից, էլեկտրականությունից, հոսող ջրից, գործող կոյուղուց և սպառողական ապրանքների մեծ մասից:³⁵ Այս հանգամանքները դրդեցին նրան, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը 1991 թ. դեկտեմբերին իրեն անկախ հռչակի: Ի պատասխան՝ Ադրբեջանը ետ քաշեց Լեռնային Ղարաբաղի (առանց այն էլ ֆիկտիվ) ինքնավար կարգավիճակը և դիմեց բիրտ ուժի: Ու թեև ենթակառուցվածքների շրջափակման պատճառով մայրաքաղաք Ստեփանակերտն արդեն իսկ ծանր վիճակում էր, ադրբեջանական զորքերը սկսեցին նրա պաշարումը: Պաշարումը դրսևորվեց քաղաքի անկանոն հրետանային ուժերի: Helsinki Watch-ի պատվիրակությունը իրավիճակը նկարագրել է այսպես.

«Մինչդեռ ադրբեջանական ուժերը վերահսկում էին Շուշի քաղաքը, որից դիտարկվում է Ստեփանակերտը, վերջինիս ուժերը ծանր վիճակում էին գրադից (սովետական հրթիռային համակարգ) և ծանր հրետանուց՝ խոցելով խաղաղ բնակիչներին, բնակելի թաղամասերի, հիվանդանոցների և նման կառույցների»:³⁶

32 Տե՛ս 1991 թ. հուլիսին Քարդոլայն Քոքսի և միջազգային պատվիրակության մնացյալ անդամների կողմից հրապարակված ռուսերեն հայտարարությունը. «Депортации осуществляются с применением грубой силы и оружия, приводя к убийствам, увечьям и утрате имущества [...]», Cox և այլք (1991):

33 US Congress (1991):

34 Human Rights Watch/Helsinki (1993), Vol. 5, 5-7:

35 Human Rights Watch/Helsinki (1992), 12:

36 Նույնը, 11:

Ռուս օդաչուներից մեկը նույնիսկ վկայել է, որ Ադրբեջանը պարբերաբար կոչ էր անում իր օդաչուներին արցունքաբեր զազ նետել Ստեփանակերտի վրա խաղաղ բնակչության շրջանում խուճապ առաջացնելու նպատակով:³⁷

Ադրբեջանի ներքին ինքնորոշման ժխտումը և մարդու իրավունքների կոպիտ խախտումները Լեռնային Ղարաբաղում հայերի համար ինքնորոշման իրացումը անջատման տեսքով դարձրին առանց այլընտրանքի: Սկստի ունենալով այն փաստը, որ այս իրադարձությունները տեղի են ունեցել շատ տարիներ առաջ, տեղին է նաև նայել այսօրվա իրավիճակին: 2020 թ. հարձակողական պատերազմից հետո, որի արդյունքում Ադրբեջանը վերոնշյալ տարածքները Լեռնային Ղարաբաղի շրջակայքում ու ներսում ետ վերադարձրեց, այդ ամենով հանդերձ հայերը մնացին հավատարիմ Ադրբեջանից անկախանալու իրենց նախկին կողմնորոշմանը: Այս մասին 2022 թ. սեպտեմբերին հրապարակավ հայտարարեց Արցախի Հանրապետության Ժողովրդավարական ճանապարհով ընտրված նախագահ Արայիկ Հարությունյանը.

«Արցախը չի կարող և չպետք է լինի Ադրբեջանի կազմում, քանի որ, նախ, Արցախի ժողովուրդն է որոշում իր սեփական ճակատագիրը սեփական հայրենիքում, և, երկրորդ, մենք ցեղասպանության ու հայրենազրկման ենթարկելու ժողովուրդ չունենք»:³⁸

Նրա մտահոգությունն անհիմն չէր. մի քանի կազմակերպություններ արդեն իսկ նախազգուշացրել էին Լեռնային Ղարաբաղում սպասվող ցեղասպանության մասին:³⁹ Միաժամանակ Ադրբեջանը լայնածավալ գործողություններ է ձեռնարկում տարածաշրջանում հայկական մշակութային արժեքների դեմ՝ ավերելով գերեզմանատները, քանդելով եկեղեցիներն ու կեղծելով պատմությունը: Եվրախորհրդարանը այս համատեքստում 2022 թ. մարտին նշել է,

«որ հայկական մշակութային ժառանգության ոչնչացումն Ադրբեջանի պետական մարմինների կողմից հայերի նկատմամբ քաջալերվող թշնամական քաղաքականության սիստեմատիկ ու ողջ երկրում կիրառվող լայն համակարգի մի մասն է, որի մեջ են մտնում պատմության ռեպրեսիաներն ու հայերի նկատմամբ ատելությունը, ինչն իր մեջ ներառում է ապամարդկայնացում, բռնության հերոսացում և տարածքային պահանջներ Հայաստանի Հանրապետության նկատմամբ, որն էլ իր հերթին սպառնում է Հարավային Կովկասում խաղաղությանն ու անվտանգությանը»:⁴⁰

37 Նույնը:

38 News.am (2022):

39 Genocide Watch (2020); Lemkin Institute for Genocide Prevention (2022):

40 Եվրախորհրդարանի 2022 թ. մարտի 10-ի բանաձևը Լեռնային Ղարաբաղում մշակութային ժառանգության ոչնչացման մասին (2022/2582):

Caucasus Heritage Watch-ը, ամերիկյան Կոոնեյի համալսարանի հետազոտական նախագիծը փաստում է արբանյակային պատերազմներով հայկական մշակութային արժեքների շարունակական ոչնչացման մասին: Նախագիծը պարզել է, որ Ադրբեջանը քանդում է հայկական եկեղեցիները⁴¹ նույնիսկ այն բանից հետո, երբ Արդարադատության միջազգային դատարանը մշակութային արժեքների ոչնչացումը կանխելու պարտադիր պահանջ է ներկայացրել Ադրբեջանի կառավարությանը:⁴² Անգամ դատարանի որոշումը չխանգարեց Ադրբեջանի կառավարությանը վերացնելու Լեռնային Ղարաբաղի եկեղեցիներից հայկական մշակութային հետքերը:⁴³ Մշակութային ցեղասպանության վերաբերյալ մտահոգությունները մեծ են հատկապես, քանի որ Ադրբեջանը արդեն իսկ գրեթե ամբողջությամբ ոչնչացրել է հայերի գոյության հետքերը իր էքսկլավ Նախիջևանից:⁴⁴

Վերջին պատերազմի ընթացքում պետության կողմից հայերի նկատմամբ հրահրված ատելությունը հանգեցրեց ռազմական հանցագործությունների խաղաղ բնակչության նկատմամբ: Amnesty International-ը նշել է, որ տեղի են ունեցել առևանգումներ, խոշտանգումներ, մահապատիժներ, անդամահատումներ և զլխատումներ, հատկապես տարեց քաղաքացիական անձանց շրջանում, ովքեր չեն կարողացել փախչել առաջխաղացող ադրբեջանցի զինվորներից:⁴⁵ Նույնիսկ պատերազմից հետո խաղաղ բնակիչները ադրբեջանական զնդակոծության թիրախի տակ էին: Հատկապես, գյուղատնտեսությանը զբաղվողների շրջանակներում մշտապես կան վիրավորներ և սպանվածներ:⁴⁶ Մի քանի անգամ Ադրբեջանը ականանետերով հրետակոծել է գյուղերը կամ բարձրախոսներով մեքենաներ է օգտագործել՝ կոչ անելով խաղաղ բնակիչներին բռնության սպառնալիքի տակ լքել իրենց գյուղերը:⁴⁷

Ադրբեջանի նախագահը, ով 2020 թ. պատերազմի ժամանակ հրապարակավ հայտարարեց, որ հայերին պետք է «շների պես վանել»,⁴⁸ դրանից հետո հրապարակավ հայտարարեց, որ Լեռնային Ղարաբաղի համար որևէ կարգավիճակ չի լինելու:⁴⁹ Նա նույնիսկ հրաժարվում է օգտագործել «Լեռնային Ղարաբաղ» միջազգային տերմինը:⁵⁰

41 Այսպես օր. Մոխրենեսի Սբ. Սարգիս եկեղեցին, տե՛ս Caucasus Heritage Watch, Monitoring Report #4 (October 2022), 10:

42 International Court of Justice, Order from 07.12.2021, Application of the International Convention on the Elimination of all form of Racial Discrimination (Armenia v. Azerbaijan), Abs. 98, Art. 1 (c):

43 Isayev, Azerbaijan announces plans to erase Armenian traces from churches (2022):

44 Caucasus Heritage Watch, Special Report #1 (September 2022):

45 Amnesty International (2022):

46 Artsakh's Human Rights Defender (2022):

47 Delegations European Parliament (2022):

48 «Նախագահ Ալիևը դիմել է ժողովրդին», Azertag.az (2020):

49 «Ալիևը կրկին բացառում է Ղարաբաղի հայերի կարգավիճակը», Azatutyun.am (2022):

50 «Նախագահ Իլհամ Ալիևը նշել է, որ Ադրբեջանում Լեռնային Ղարաբաղ կոչվող վարչական տարածքային միավոր չկա», Azertag.az (2021):

Այս բոլոր հանգամանքները պարզորոշ ցույց են տալիս, որ այսօր էլ Լեռնային Ղարաբաղի հայերը իրենց ինքնորոշման իրավունքի իրացումը բացառապես Ադրբեյջանից անկախանալու վիճակում են տեսնում: Փաստորեն Ադրբեյջանը՝ մարդու իրավունքների լուրջ խախտումներով, որոնք ընդհուպ ցեղասպանության վտանգի են հասնում,⁵¹ հայերին չի թողնում որևէ այլընտրանք:

8. Լեռնային Ղարաբաղի ռազմական ուժի կիրառումը

Քննադատական մոտեցում ունեցողներն այն կարծիքի են, որ Լեռնային Ղարաբաղի միակողմանի անջատումը և ռազմական ուժի կիրառմամբ տարածքային փոփոխությունները չեն համապատասխանում միջազգային իրավունքի սկզբունքներին:⁵² Եթե առաջնորդվենք այս տեսակետով, ապա վերոնշյալ ինքնորոշման իրավունքը անջատման ձևով որպես վերջին միջոց՝ մարդու իրավունքների լուրջ խախտումների դեպքում, պարզապես հօդս կցնդի: Հազվադեպ է դաժանորեն ճնշող պետությունը ճանաչում օրինական ճանապարհով ձեռք բերված ինքնորոշման իրավունքը, այնպես որ ճնշվածների համար մնում է միայն մեկ տարբերակ որպես ինքնապաշտպանության միջոց՝ ուժը: Այս պարագայում էլ է այդպես. ինչպես արդեն ներկայացվել է, արցախահայերի ինքնորոշման խաղաղ կոչերը վերածվեցին էլ ավելի դաժան բռնությունների՝ հասնելով Ադրբեյջանի կողմից մարդու իրավունքների ծանր խախտումների: Արցախահայությունն ուներ ընտրություն՝ ուժի կիրառումով հասնել միջազգային իրավունքով երաշխավորված իր ինքնորոշման իրավունքին կամ անհետանալ: Այս առումով ինքնապաշտպանության նպատակով ռազմական ուժի կիրառումը կարգավորվում է միջազգային իրավունքի շրջանակներում:

Խնդրահարույց կարող է լինել հայկական առաջխաղացումը նախկին ԱԽՍ-ից դուրս: Ինչպես նկարագրված է մեր ներածությունում, հայկական զորամիավորումները գրավել են նաև իրենց բուն շրջանից դուրս գտնվող ադրբեյջանական տարածքներ: Անգամ եթե այդ հարձակումները ռազամավարական բնույթ էին կրում, դրանք բերեցին հումանիտար աղետների. հարյուր հազարավոր ադրբեյջանցի խաղաղ բնակիչներ դիմեցին փախուստի կամ բռնի տեղահանվեցին, շատերը վիրավորվեցին կամ սպանվեցին: Նվաճված քաղաքները թալանվեցին ու ավերվեցին:⁵³ Հավանաբար, վերջինս հատուցում էր դրանից առաջ քանդված ու թալանված հայկական բնակավայրերի համար: Human Rights Watch-ը

51 Տե՛ս վերևում ծնթ. 39 և 45:

52 Այսպես օր.՝ Melnyk, Nagorny-Karabak, Abs. 10:

53 Այս մասին այլ աղբյուրների հետ մեկտեղ Human Rights Watch 1994 թ. զեկույցը տալիս է հայկական հարձակման աղետալի մարդասիրական հետևանքների համապարփակ պատկերացում:

հաստատում է «արարքը արարքի դիմաց» (quid pro quo⁵⁴) կոնֆլիկտի բնույթը. օրինակ, ադրբեջանական Ադրամ քաղաքի գրավումից և ավերումից մեկ ամիս առաջ հայկական զորքերը հետ գրավեցին Լեռնային Ղարաբաղի նախկին երկրորդ ամենամեծ քաղաքը՝ Մարտակերտը, որը ադրբեջանցիները թողել էին այնտեղ ավերակների տեսքով:⁵⁵ Սակայն դա, անկասկած, չի արդարացնում միջազգային մարդասիրական իրավունքի խախտումները:

Այդուամենայնիվ նման գործողությունները ազդեցություն չունեն կիրառված անջատման իրավականության վրա, քանի որ այն արդեն իսկ օրինական կերպով իրականացված էր վերոնշյալ հարձակումների պահին: Այս իրավունքի կիսողումը, ընդհակառակը, հնարավորություն է տալիս պատասխանատվության ենթարկելու նրանց, ովքեր խախտել են միջազգային մարդասիրական իրավունքը:

9. Լեռնային Ղարաբաղի անկախությունը խորհրդային սահմանադրական իրավունքի լույսի ներքո

Իրավագիտության մեջ նաև նշվում է, որ հնարավոր է Լեռնային Ղարաբաղը օրինական կերպով արդեն ձեռք է բերել իր անկախությունը ԽՍՀՄ-ի սահմանադրության համաձայն:⁵⁶ Ադրբեջանական Խորհրդային Հանրապետությունը 1977 թ. Սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն իրավունք ուներ Միությունից դուրս գալու, բայց դա կապված էր սահմանադրական ընթացակարգի հետ: Չնայած դրան՝ Ադրբեջանը անտեսեց այս ընթացակարգը և 1991-ի օգոստոսի 30-ին ընդունեց «պետական անկախության վերականգնման մասին» հռչակագիրը: 1990 թ. ապրիլի 3 ընդունած օրենքի 3-րդ հոդվածի կետ 1-ը «ԽՍՀՄ կազմի միութենական հանրապետությունից դուրս գալու հետ կապված հարցերի կարգավորման ընթացակարգի մասին» էր, որը նույնպես վավերացվել էր Ադրբեջանի ԽՍՀ-ի կողմից, իրավունք ընձեռելով ինքնավար տարածքներին ազատորեն որոշելու՝ Խորհրդային միության մեջ մնալ, թե՛ դուրս գալ:

«Համաձայն վերը նշված օրենքի 3-րդ հոդվածի, յուրաքանչյուր ինքնավար հանրապետության կամ ինքնավար շրջանի ժողովրդին տրվում էր որոշելու միության մեջ մնալու կամ միությունից դուրս գալու իրավունքը, ինչպես նաև սահմանադրական օրենսդրությանը համապատասխան դրանց կարգավիճակի հարցը բարձրացնելու իրավունքը»:

54 Լատիներեն արտահայտություն է, որն օգտագործվում է արդի եվրոպական լեզուներում նշանակում է ապրանքների կամ ծառայությունների փոխանակում, որտեղ մեկ փոխանցումը կախված է մյուսից, ինչպես օր.՝ «ինչ ինչի համար» կամ «լավություն՝ լավության դիմաց» [ծնթ. թարգմ.]:

55 Human Rights Watch (1994), 35:

56 Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Luchterhandt, Der Status der Republik Berg-Karabach:

Արցախահայերը որոշեցին մնալ Խորհրդային Միության կազմում,⁵⁷ ուստի Ադրբեջանը դուրս եկավ Խորհրդային Միությունից առանց Լեռնային Ղարաբաղի սովետական սահմանադրական օրենսդրությանը համապատասխան: Ուստի Լեռնային Ղարաբաղին մեղադրել չպահպանված ընթացակարգի նորմերի համար անհիմն է, քանի որ Ադրբեջանն ինքն է անտեսել ընթացակարգային կանոնները՝ այդպիսով շեղելով ինքնավար մարզին ճիշտ ընթացակարգից:

10. Արդյունք և հեռանկար

Անջատման իրավունքը մնացել է այլընտրանքային վերջին միջոց արցախահայերի համար, ինչպես՝ առաջ, այնպես էլ՝ այսօր: Միջազգային հանրության՝ Արցախի Հանրապետության անկախությունը չճանաչելու փաստը ամենայն հավանականությամբ քաղաքական, չթե՛րավական պատճառներունի: Ադրբեջանը հանածո վառելիքի կարևոր մատակարար է և, հետևաբար, ստեղծել է աջակիցների լայն ցանց: Դրան գումարած, ղարաբաղյան առաջին պատերազմի արդյունքում հայկական հարձակումների պատճառով առաջացած Ադրբեջանի քաղաքացիական բնակչության տեսանելի կորուստները տեղ չթողեցին սիմպատիաների համար, այլ ընդհակառակը՝ նախնական միջազգային աջակցությունը⁵⁸ վերածվեց հայերի նկատմամբ կրիտիկական տրամադրության:⁵⁹

Ի վերջո, Հարավային Կովկասում երկարաժամկետ խաղաղությունը հնարավոր է միայն անաչառ և անկախ վերագնահատման արդյունքում: Այս պահին, դրա իրագործումը ձախողվելու է՝ առաջին հերթին, պայմանավորված Ադրբեջանի պետականորեն հովանավորվող հայատյաց քաղաքականության պատճառով, որը հաստատվել է ինչպես Եվրոպական խորհրդարանի, այնպես էլ Արդարադատության միջազգային դատարանի կողմից:⁶⁰

Քանի որ Ադրբեջանի ռազմական հանցագործություններն ու քաղաքական ղեկավարության ցեղասպանական հռետորաբանությունը լավ փաստագրված են, միջազգային հանրությունը պետք է ավելի մեծ պատասխանատվությամբ մոտենա այս հարցին: ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը կարող է Լեռնային Ղարաբաղը վերցնել ՄԱԿ-ի վերահսկողության ներքո⁶¹ և մինչև քաղաքական լուծում գտնելը ապահովել խաղաղ բնակչության անվտանգությունն ու տեղահանվածների վերադարձը:

57 Նույնը, 279:

58 Europäisches Parlament (1988), 106:

59 Այս մասին այլ աղբյուրների հետ մեկտեղ տե՛ս ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հետևյալ բանաձևերը՝ UN Security Council Resolutions 822, 853, 874, 884:

60 International Court of Justice, Order from 07.12.2021, Abs. 98, Art. 1 (b):

61 Այս մասին այլ աղբյուրների հետ մեկտեղ տե՛ս The Hague Centre for Strategic Studies (2021), 32:

Արժեքների վրա հիմնված աշխարհակարգի սկզբունքներին համապատասխան Ադրբեջանը պետք է պատասխանատվություն կրի անօրինական ռազմական ուժի միջոցով իր աշխարհաքաղաքական շահերը պարտադրելու համար: Սա պետք է տեղի ունենա այլ պետություններին նմանատիպ գործողություններից ապամոտիվացնելու նպատակով: Եվ ի վերջո արդեն կասկածներ են առաջացել, որ Մոսկվային ոգևորել է Ադրբեջանի դեմ պատժամիջոցների բացակայությունը՝ ենթադրելով, որ ստատուս քվոյի փոփոխությունը ռազմական ճանապարհով կընդունվի միջազգայնորեն:⁶²

Գրականություն

Արցախի Հանրապետության Անկախության հռչակագիրը, անգլերենով՝ State Independence Declaration of the Nagorno Karabagh Republic 6.1.1992, տես՝ <http://president.nkr.am/en/nkr/nkr2> (հարցվել է 30.11.2022):

Amnesty International, 17.05.2022, Last to flee: Older people's experience of war crimes and displacement in the Nagorno-Karabakh conflict [վերջին փախուստը. տարեցների փորձը պատերազմական հանցագործությունների և տեղահանության մասին Լեռնային Ղարաբաղի հակամարտությունում], տես՝ <https://www.amnesty.org/en/documents/eur54/5214/2022/en/> (հարցվել է 30.11.2022):

Artsakh's Human Rights Defender, 16.11.2022, Ombudsman: «Azeri forces killed 18 people in Artsakh over past two years» [Օմբրոդանեն. «վերջին երկու տարվա ընթացքում Արցախում ադրբեջանական ուժերը 18 մարդու են սպանել»], in: Panorama.am, տես՝ <https://www.panorama.am/en/news/2022/11/16/Artsakh-ombudsman/2756803> (հարցվել է 4.3.2023):

Azatoryun.am, 12.08.2022, Aliyev Again Rules Out Status For Karabakh Armenians [Ալիևը կրկին բացառում է Ղարաբաղի հայերի կարգավիճակը], in: <https://www.azatoryun.am/a/31985659.html> (հարցվել է 30.11.2022):

Azertag.az, 17.10.2020, President Aliyev addressed the nation, [Նախագահ Ալիևը դիմել է ժողովրդին], տես՝ https://azertag.az/en/xeber/President_Ilham_Aliyev_addressed_the_nation_VIDEO-1616281 (հարցվել է 30.11.2022):

Azertag.az, 24.09.2021, President Ilham Aliyev: «There is no administrative territorial unit called Nagorno-

Karabakh in Azerbaijan» [Նախագահ Իլհամ Ալիևը նշել է, որ Ադրբեջանում Լեռնային Ղարաբաղ կոչվող վարչական տարածքային միավոր չկա], տես՝ https://azertag.az/en/xeber/President_Ilham_Aliyev_There_is_no_administrative_territorial_unit_called_Nagorno_Karabakh_in_Azerbaijan-1884245 (հարցվել է 30.11.2022):

Babaian, Sarah, Das völkerrechtliche Selbstbestimmungsrecht Berg-Karabachs [Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման միջազգային իրավունքը], in: Petrossian Gurgen/Babaian Sarah/Zakarian Arlette (Eds.), Berg-Karabach: Eine völkerrechtliche Analyse des Konflikts um Arzach, Baden-Baden 2022, 91-132:

Blay, Samuel K. N., Territorial Integrity and Political Independence [Տարածքային ամբողջականությունն ու քաղաքական անկախությունը], in: Max Planck Encyclopedia of Public International Law, March 2010, Abs. 1:

Caucasus Heritage Watch, Special Report #1, Silent Erasure: A Satellite Investigation of the Destruction of Armenian Cultural Heritage in Nakhchivan, Azerbaijan, September 2022 [Լուռ բնաջնջում. Հայկական մշակութային ժառանգության ոչնչացման արքայականի հետաքննություն Նախիջևանում, Ադրբեջան] & Nagorno-Karabakh Monitoring Report #4, October 2022 [Լեռնային Ղարաբաղի մոնիթորինգ զեկույց], տես՝ https://caucasusheritage.cornell.edu/?page_id=866 (հարցվել է 27.7.2023):

Cox, Caroline և այլք, [Միջազգային պատվիրակության ղեկավարացիա, հուլիս 1991 թ.], in: Panorama.am from 13.05.2011, տես՝ <https://www.panorama.am/ru/news/2011/05/13/kolco/948551> (հարցվել է 30.11.2022):

Delegations European Parliament, 16.03.2022, DSCA: Statement by the Chair on the worrying humani-

- tarian situation in Nagorno-Karabakh, Statement by the Chair of the Delegation for relations with the South Caucasus, MEP Marina Kaljurand, on the worrying humanitarian situation in Nagorno-Karabakh Brussels [Հարավային Կովկասի հետ հարաբերությունների պատվիրակության նախագահ, Եվրախորհրդարանի պատգամավոր Մարինա Կալյուրանդի հայտարարությունը Լեռնային Ղարաբաղում հումանիտար անհանգստացնող իրավիճակի վերաբերյալ], ստեր: <https://www.europarl.europa.eu/delegations/en/dsca-statement-by-the-chair-on-the-worry/product-details/20220316DPU32358> (հարցվել է 30.11.2022):
- De Waal, Thomas, Black Garden. Armenia and Azerbaijan Through Peace and War [Սև այգի. Հայաստանն ու Ադրբեջանը խաղաղության և պատերազմի միջով], New York University Press 2013:
- De Waal, Thomas, The Caucasus. An introduction [Կովկասը: Ներածություն], Oxford University Press 2019:
- European Parliament, 07.07.1988, Resolution on the Situation in Soviet Armenia [Եվրոպական պառլամենտ, Խորհրդային Հայաստանում իրավիճակի վերաբերյալ բանաձև], ստե՛ <https://op.europa.eu/en/publication-detail/-/publication/0198f9ef-fbd9-4f87-8350-4afa028e78c4/language-en> (հարցվել է 30.11.2022):
- Fults, Alexa / Stronski Paul, The Ukraine War Is Reshaping the Armenia-Azerbaijan Conflict, Carnegie Endowment for International Peace, 25.04.2022, ստե՛ <https://carnegieendowment.org/2022/04/25/ukraine-war-is-reshaping-armenia-azerbaijan-conflict-pub-86994> (հարցվել է 29.6.2023):
- Genocide Watch, 06.11.2020, Genocide Emergency Alert, from [Ցեղասպանության ճգնաժամի ահազանգ], ստե՛ <https://www.genocidewatch.com/single-post/genocide-emergency-alert-on-the-war-in-artsakh-nagorno-karabakh> (հարցվել է 30.11.2022):
- Hett, Felix, 16.03.2022, Angriff auf Ukraine: So reagieren Armenien, Aserbaidshan und Georgien [Հարձակում Ուկրաինայի վրա: Ահա թե ինչպես են արձագանքում Հայաստանը, Ադրբեջանը և Վրաստանը], in: Vorwaerts.de, ստե՛ <https://www.vorwaerts.de/artikel/angriff-ukraine-so-reagieren-armenien-aserbaidshan-georgien> (հարցվել է 4.3.2023):
- Horizon Weekly, 22.11.2019, Aliiev admits Azerbaijan worked to boost number of Azeris in Artsakh [Ալիևը խոստովանել է, որ Ադրբեջանն աշխատել է Արցախում ադրբեջանցիների թվաքանակն ավելացնելու ուղղությամբ], ստե՛ <https://horizonweekly.ca/en/aliyev-admits-azerbaijan-worked-to-boost-number-of-azeris-in-artsakh/> (հարցվել է 30.11.2022):
- Human Rights Watch/Helsinki, May 1991, Conflict in the Soviet Union: Black January in Azerbaidzhan [Հակամարտություն Խորհրդային միությունում. Սև հունվար Ադրբեջանում], ստե՛ <https://www.hrw.org/reports/pdfs/u/ussr/ussr915.pdf> (հարցվել է 4.3.2023):
- Human Rights Watch/Helsinki, September 1992, Bloodshed in the Caucasus: Escalation of the Armed Conflict in Nagorno Karabakh [Արյունահեղություն Կովկասում՝ զինված հակամարտության սրումը Լեռնային Ղարաբաղում] ստե՛ <https://www.hrw.org/reports/1992%20Bloodshed%20in%20Cauc%20-%20Escalation%20in%20NK.pdf> (հարցվել է 4.3.2023):
- Human Rights Watch/Helsinki, July 1993, Vol. 5, Bloodshed in the Caucasus: Indiscriminate Bombing and Shelling by Azerbaijani Forces in Nagorno Karabakh [Արյունահեղություն Կովկասում. Ադրբեջանական ուժերի կողմից անկանոն ուժեղացում, զինված ուժերի հակամարտության սրումը Լեռնային Ղարաբաղում] ստե՛ <https://www.hrw.org/sites/default/files/reports/USSR2937.PDF> (հարցվել է 4.3.2023):
- Human Rights Watch Report, December 1994, Azerbaijan: Seven Years of Conflict in Nagorno-Karabakh, [Ադրբեջան. հակամարտությունների յոթ տարիները Լեռնային Ղարաբաղում], ստե՛ <https://www.hrw.org/report/1994/12/01/seven-years-conflict-nagorno-karabakh> (հարցվել է 30.11.2022):
- International Court of Justice, Order from 07.12.2021, Application of the International Convention on the Elimination of all form of Racial Discrimination (Armenia v. Azerbaijan) [Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման միջազգային կոնվենցիայի կիրառում (Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի)], ստե՛ <https://www.icj.org/case/180/orders> (հարցվել է 27.7.2023):
- Isayev, Heydar, Azerbaijan announces plans to erase Armenian traces from churches [Ադրբեջանը հայտարարում է եկեղեցիներից հայկական հետքերը ջնջելու պլանների մասին], in: Eurasia-net.org, 04.02.2022, ստե՛ <https://eurasianet.org/azerbaijan-announces-plans-to-erase-armenian-traces-from-churches> (հարցվել է 30.11.2022):
- Karapetian, Merujan, The Ethnic Structure of the Population of Mountainous Karabagh in 1921 [Լեռնային Ղարաբաղի բնակչության էթնիկ կազմը 1921 թ.], in: Armenian Review 44, Nr. 4 (1991), 69-85:
- Lemkin Institute for Genocide Prevention, 24.11.2022, Statement on Self-Determination of Armenians in Artsakh (South Caucasus): There is No Peace or Prosperity through Genocide [Հայտարարություն Արցախում (Հարավային Կովկաս) հայերի ինքնորոշման մասին. Ցեղասպանության միջոցով խաղաղություն և կամ բարգավաճում

- չկա], տես՝ [https://www.lemkinstitute.com/statements-new-page/statement-on-self-determination-of-armenians-in-artsakh-\(south-caucasus\)%3A-there-is-no-peace-or-prosperity-through-genocide](https://www.lemkinstitute.com/statements-new-page/statement-on-self-determination-of-armenians-in-artsakh-(south-caucasus)%3A-there-is-no-peace-or-prosperity-through-genocide) (հարցվել է 30.11.2022):
- Luchterhandt, Otto, Das Recht Berg-Karabachs auf staatliche Unabhängigkeit aus völkerrechtlicher Sicht [Լեռնային Ղարաբաղի պետական անկախության իրավունքը միջազգային իրավունքի տեսանկյունից], in: Archiv des Völkerrechts (AVR) 1993, Nr. 31, 30-81:
- Luchterhandt, Otto, Der Status der Republik Berg-Karabach aus der Sicht des sowjetischen Staatsrechts [Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը խորհրդային պետական իրավունքի տեսանկյունից], in: Kantian Raffi, Deutsch-Armenische Gesellschaft (Ed.), Armenien – Geschichte und Gegenwart in schwierigem Umfeld, Frankfurt am Main 1998, 267-286:
- Melnyk, Andriy, Nagorny-Karabakh [Լեռնային Ղարաբաղ], in: Max Planck Encyclopedia of Public International Law, Mai 2013, Absatz 10, տես՝ <https://opil.ouplaw.com/display/10.1093/law:epil/9780199231690/law-9780199231690-e2073?prd=EPIL> (հարցվել է 4.3.2023):
- News.am, 14.09.2022, Arayik Harutyunyan: «All those documents, which may recognize Artsakh as part of Azerbaijan, are unacceptable for us» [Արայիկ Հարությունյան. «Մեզ համար անընդունելի են բոլոր այն փաստաթղթերը, որոնք կարող են Արցախը ճանաչել որպես Ադրբեջանի մաս»] տես՝ <https://news.am/eng/news/720249.html> (հարցվել է 30.11.2022):
- OC Media, 09.11.2022, Aliyev admits Azerbaijan started the Second Nagorno-Karabakh war [Ալիևը խոստովանել է, որ Ադրբեջանը սկսել է Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմը], տես՝ <https://oc-media.org/aliyev-admits-azerbaijan-started-the-second-nagorno-karabakh-war> (հարցվել է 30.11.2022):
- Parks, Michael, Soviet Tells of Blocking Slaughter of Armenians: General Reports His Soldiers Have Suppressed Dozens of Massacre Attempts by Azerbaijanis [ԽՍՀՄ-ը տեղեկացնում է հայերի կոտորածի կասեցման մասին. Մի զեներալ զեկուցում է, որ նրա զինվորները ճնշել են ադրբեջանցիների կողմից կազմակերպված ջարդերի տասնյակ փորձեր], in: Los Angeles Times (27.11.1988), տես՝ <https://www.latimes.com/archives/la-xpm-1988-11-27-mn-1060-story.html> (հարցվել է 26.06.2023):
- Shnirelman, Victor A., The Value of the Past: Myths, Identity and Politics in Transcaucasia [Անյցալի արժեքը. Սոսսպելները, ինքնությունը և քաղաքականությունն Անդրկովկասում], National Museum of Ethnology, Osaka 2001:
- The Hague Centre for Strategic Studies, Armenia and the future of the South Caucasus [Հայաստանն ու Հարավային Կովկասի ապագան], October 2021, տես՝ <https://hcss.nl/wp-content/uploads/2021/10/Armenia-and-Future-of-South-Caucasus-HCSS-Okt-2021.pdf> (հարցվել է 4.3.2023):
- UN General Assembly, Resolution 2625 (XXV) from 24.10.1970 [ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1970 թ. հոկտեմբերի 24-ի 2625 (XXV) բանաձևը], տես՝ <https://www.jus.uio.no/english/services/library/treaties/01/1-01/friendly-relations.html#history> (հարցվել է 30.11.2022):
- UN Peacemaker, 05.05.1994, Bishkek Protocol [Բիշկեկի պրոտոկոլը], տես՝ <https://peacemaker.un.org/armeniaazerbaijan-bishkekprotocol94> (հարցվել է 30.11.2022):
- US Congress, S.RES.128, Resolution Condemning violence in Armenia [Հայաստանում բռնությունը դատապարտող բանաձև], 17.05.1991:
- Walker, C. J., Armenia and Karabakh. The struggle for unity [Հայաստան և Ղարաբաղ. Միության պայքարը], Minority Rights Group 1991:

Հեղինակ

Դասթին Հոֆման

Իրավաբան, միջազգային և պետական իրավունքի մագիստրոս, Եվրոպական խորհրդարանի ռեֆերենտ և պատգամավորի աշխատակազմի ղեկավար, Բրյուսել, dustin.hoffmann@europarl.europa.eu

Ներկայացված տեսակետները արտահայտում են բացառապես հեղինակի դիրքորոշումը:

Թարգմանությունը՝ Հայկուհի Գրիգորյանի

Open Access

This paper is published under the Creative Commons Attribution-ShareAlike 4.0 International license ([CC BY-SA 4.0](https://creativecommons.org/licenses/by-sa/4.0/)). Please note that individual, appropriately marked parts of the paper may be excluded from the license mentioned or may be subject to other copyright conditions. If such third party material is not under the Creative Commons license, any copying, editing or public reproduction is only permitted with the prior consent of the respective copyright owner or on the basis of relevant legal authorization regulations.